



ՀԱՅԻՐԱՅԻՆ ԴԱՐԱՆ

ԱՐԺԱՅԻՆ ԴԱՐԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 127

27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թորքոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ . արծ . վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ .— Արսասահ-
ման տար . Ֆր . 10 . վեցամս . 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՑԷ .— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 . Պայրամ փողոց 5, 4 .

Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու ե
յօղուած: 3.— Կեղծանունով զրկուած յօղուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօղուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահադղներ, եւն., եւն.: Գիրները անմրցելի կերպով աժան են:
Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:

A decorative horizontal border featuring a central circular emblem with a cross and floral motifs, flanked by intricate leaf and vine patterns.

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՍ.ԲԱ.Թ-Ա.Թ-ԵՐԹ-

Երրորդ ասի 27 Դեկտեմբեր 1913 թիվ 127

«Մթազան Բահանյայայեն Արոս Ժ. կը մաղթէ որ Կարողիկէ Արձագանգ շարքաբերքը շարունակէ Հայասանի կարողիկէ ժողովրդոց մէջ, մամուլով ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կաթարել, ի բարգաւաճան կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթումաց արդիւնաւորութեան համար Մթազան Հայրն արտազին կ'օրհնէ յիշեալ Շաւարաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողներն»:

Համախմբ. Մեկի հեյ Վալիի, առ ԱՄՆԵՆ. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թերզեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Վերիկիո
23 Նոյեմբերի 1912, քնդ 60780 թուահամարաւ:

ԱՌ ԱՄԵՆ. ԳԵՐԵՐԶ. ՏԷՐ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ Կ. ՊԱՏՐԻԱՐԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԳԼԽԱԴՐ ԱՌԱՔԵԼՈՅ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Յնծութեան եղերով կը տօնեմք ձեր յիշատակ,
Ո՛ր Պետրոս եւ Պօղոս Առաքեալներ առաջին,
Որ երկիրս երկնաւոր Տիրոջ ըրի՛ք հրապատակ՝
Կանգնելով ամեն կողմ անյաղք դոշակը խաչին։
Երկինքէն անդադար հանդիսացի՛ք օծանդակ
Զինուորեայ, ընդհանուր Եկեղեցւոյ Հօր աչին ,
Որ ազդի զարհուրանք ոտխներուն թովանդակ ,
Հասցրեմ զանեմեմիս՝ ուր յաղթողներ կը հանգչին։
Եւ պաշտպա՛ն եղի՛ք ձեր Անուանակցին քաջարի,
Որ կ'ուղղէ խընամեղ նաւակը Սուրբ Գրիգորի.
Այնխոռով ոգիներն ըրե՛ք նըկուն եւ անհնէ։
Եիշարարձ աղաւնին այլ եւս թող զայ երեւալ
Եւ ձգուի՛ կուտակեայ անպերուն վրայ ծիածան.
Նշան սուրբ միութեան անբողջ ազգին Հոռնայ և

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փրկչին Ս. Ծնունդը

(Ղաւկ. Բ. 1-7)

(Շար.)

Բ

1. Ահա՛ Աստուածորդին մարդացեալ, ծընաւ խեղճ մարդիկներու նման, և ծնած ժամանակը երկիրս ընդունեց զինքը, ինչպէս կը սորվեցնեն ոմանք ի Հարց. Նա պիտի սորվեցնէր խոնարհութիւնը, և պիտի յիշեցնէր թէ մարդը՝ ո՛րքան ալ հպարտ ըլլայ, սակայն և այնպէս հողէն ստեղծուեցաւ։ Ուստի Սողոմոնին հետ՝ որ իրեն առակ օրինակի և խորհրդանշանն էր, ի ծնանկն գոչեց և Քրիստոս. «Ի նոյն ի նմանալիս յերկիր անկայ» (Իմաստ. Է. 3)։ — Այլք ի Հարց կ'ուսուցանեն թէ Քրիստոս ծնած վայրկեանին հրաշալեօք եկաւ իւր Աստուածամօր օրհնեալ բազումներուն մէջ, որ անպատու մյծութիւն և յարգութիւն զգալով, Անոր առջեւ խոնարհեցաւ ու երկրպագեց անհատկանալի զգացումներով զեղած. ապա քաղցրութեամբ համբուրեց ու պատեց խանձարուրներով։

2. Նոյնպէս Քրիստոս ծնած ատեն ուրիշ մանուկներու նման ճիշտ արձկեց ու լացաւ, որպէս զի սկսի մեր մեղքերը ողբալու, քաւելու, ու նաեւ ապացուցուի իր առած մարդկային բնութեան իսկականութիւնը, ու Սողոմոնին հետ՝ որ իր նախատիպար խորհրդանշանն (symbole, type) էր. ըսաւ. «Եւ ես ալ մահկանացու մարդ մը՝ ամենուն նման, առաջին խօսքս լացի մը եղաւ՝ ամենուն նման. ու պատեցայ խանձարուրներով» (Իմաստ. Է.)։ Բայց հազիւ թէ ծնաւ, Մանուկ Փրկչին իր աս արցունքները, իր անձը, իր բովանդակ կեանքը, իր խաչը, իր մահը ողջակէզ պատարագ մատոյց Աստուծոյ՝ մարդիկներու փրկութեան համար. ըստ այնմ երբ. Ժ. ու Ե. «Աւիսարհի մեծ աւե-

նը կ'ըսէ. Զոհեք ու պատարագներ չուղեցիր բայց ինծի մարմին մը հաստատեցիր... Ան ասեն ըսի թէ՝ Ահա եկայ»։ — «Դու իմ Որդիս ես. ես այսօր զեզ ծնայ... Դու՝ Մեկիսեդեկի կարգին համաձայն յաւիտեան փահանայ ես։ Նա իր մարմնոյ օրերուն մեջ՝ ուժգին հառաչանքներով ու արցունքներով աղօթքներ ու պաղատանքներ կը մատուցանէ»։

3. Քրիստոսի ծննդեան ժամանակ, հրեշտակները որ այս ահաւոր խորհրդոյս սքանչացած մնացած էին, քանի որ իրենցմէ ծածկուած էր ի յաւիտեանց, անձկակարօտ ընկերացան իրենց Տիրոջը, ինչպէս ծառաներն ու սպասարկուները կ'ընկերանան իրենց թագաւորին. ու հրճուանքով, խոնարհութեամբ, զարմացմամբ ու յարգութեամբ երկրպագեցին մարդացեալ Փրկչին, անհուն Աստուծոյ. «Յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաւիտեան» աւէ. երկիրպագեցն նմա ամենայն հրեշտակ Աստուծոյ... Յո՛ երբեք ասաց ի հրեշտակաց. Նիստ ընդ աջմէ իմմէ» (Երբ. Ա.)։ Որով խառն ու մաւր զարձան եղան երկինք, ուր խոնեցան Սերովբէք և Քերովբէք, Անոր ահեղ փառքն ծածկելով իրենց զէմքն ու աղաղակելով. «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց... Փա՛ւր ի բարձունս Աստուծոյ»։ Իրենց ստեղծողն ու երջանկութիւնը՝ տեոան խեղճ մանուկ մը եղած, յարգերու վրայ լացող, Նա որ անոնց թեւերուն վրայ կը թռչի՝ Լոյս անմատչելի։ Բանին Աստուծոյ Մարդեղութեան ու Ծննդեան խորհուրդը յիշաւ ի մանալի եղաւ հրեշտակաց, իբր զորք մեծագործ Կարողութեան, Իմաստութեան, Արդարութեան և Գթութեան Աստուծոյ. «Յայտնի իսկ է խորհուրդն աստուածպաշտութեան որ երեւեցաւ մարմնով, արդարացու հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, փարոգեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղել յաւիտեանի, եւ վերացաւ փառօք» (Ա. Տիմ. Գ. 16)։ — Երբ իջաւ Բանն Աստուծոյ և ծնաւ յերկրի, իր հետը բերաւ երկնից ամբողջ բնակչութիւնը. «Խոնարհեցոյց զերկինս եւ եջ» (Սղմ. Ժ. 10)։ — «Աստուած մարդ եղաւ որպէս զի մարդն՝ ըլլայ Աստուած։ Եւ որ-

պէս զի հրեշտակաց հացն ուսեր մարդ, հրեշտակաց Տէրը մարդ եղաւ. ա՛յս է Բանն համառօս զոր քրաւ Տէր» (Ս. Օգոստ. — Հմմ. Եւ. Ժ. 23. — Հռ. Թ. 28): Մեր Պահապան հրեշտակներն ալ երկրպագեցին Մանուկ Յիսուսի. . . «Եւ քանզի երկնից Թագաւորը մեր հոգեպէն մարմինն առաւ, հրեշտակաց աղանաւորքն բարձրութիւնը այլ եւս չարհամարհեր մեր տկարութիւնը: Մեզի հետ խաղաղութիւն կը կնքեն հրեշտակները, նախկին հակառակութեան ոգին մէկզդի կը դնեն, և զանոնք որ նախապէս իբր տկարներ ու թշուառներ արհամարհեցին, հիմա իբր ընկեր կը յարգեն: Ասոր համար է որ Ղովտ (Ման. ԺԺ. 1) և Յեսու (Յեսու Ե, 15)) հրեշտակներու երկրպագութիւն կ'ընեն, և սակայն չեն արդիւար. իսկ Յովհաննէս Յայտնութեան մէջ հրեշտակին երկրպագութիւն ընել ուզեց, և սակայն նոյն հրեշտակը զինքը արդիւար իրեն երկրպագելէ՝ ըսելով. «Ինձի երկրպագութիւն մի՛ բնեւ, որովհետեւ ես ալ քու եւ քու եղբարցդ ծառայակիցն եմ» (Յայտ. ԻԲ. 9): Ինչո՞ւ համար է որ Փրկչին պաշտօնէն առաջ հրեշտակները մարդկանքէն կ'երկրպագուին ու չեն արգելուր, իսկ վերջը չեն ուզեր երկրպագուիլ, եթէ ոչ որովհետեւ մեր բնութիւնը, զոր յառաջագոյն կ'արհամարհէին, երբ կը տեսնեն որ անիկայ իրենցմէ վեր առնուած է, կը վախճան որ իրենց առջեւն իշխայ իրեր: Եւ այլ եւս իրենցմէ վար իբրեւ տկար չյանդգնեցան արհամարհել, զոր իրենցմէ վեր կը մեծարեն երկնից Թագաւորին վրայ: Եւ անարժան չեն սեպեր ընկեր ունենալ մարդը անոնք՝ որ իրենցմէ վեր կ'երկրպագեն Մարդ-Աստուծոյ: Հոգ տանինք ուրեմն, ամենասիրեցեալ եղբարք, որ անմաքրութիւն մը չպղծէ զմեզ, որ Աստուծոյ յաւիտենական նախապիտութեան մէջ թէ՛ Աստուծոյ քաղաքացիք, թէ՛ հրեշտակաց հաւասարներն ենք, Պահպանենք մեր արժանապատուութիւնը մեր բարքով ու կենցաղով. բնաւ չուայտուրթիւն մը զմեզ չի պղծէ, բնաւ աղ-ճեղի մտածմունք զմեզ չամբաստանէ, բնաւ տարութիւն մը մեր միտքը չվշտացնէ, բնաւ

նախանձի ժանգը չի սպառէ, բնաւ հպարտութիւնը չուռեցնէ, բնաւ ցանկութիւնը երկրաւոր հաճոյքներով չի բղքտէ, բնաւ բարկութիւնը չբռնկեցնէ: Քանզի մարդիկ Աստուծոյն կոչուեցան: Պաշտպանէ՛ ուրեմն ի քեզ՝ ո՛վ մարդ, մոլութեանց դէմ Աստուծոյ պատիւը, վասն զի քեզի համար մարդ եղաւ» (Ս. Դրիգոր Մեծ Քննյալտ.):

4. Բանն մարդացեալ Քրիստոս, ծնանելով ի կնոջ մեկի ազգական եղաւ ու եղբայր, մանաւանդ թէ ուղեց ըլլալ մեր մարմինն ու արիւնը, որպէս զի կարող ըլլայ գործել մարդու հետ մարդ, հաւասար հաւասարի հետ: — «Աբխասիմք ըլլալ ինչպէս աս փոքրիկ մանուկը, սուրբիմք անկէ՛ զի հեզ ու խոնարհ է սրտով, զի մի՛ Մեծն Աստուած առանց պատճառի փոք մարդ եղած ըլլայ. հաղորդ ըլլանք իր շարչարանացը, եւ զինքն ընծայեմք քաւութիւն մեր մեղացը, զի ասոր համար ծնաւ Նա» (Ս. Բեռն.):

5. Հաւատացեալ հոգին մտնելով այդ փառաց ախոռին մէջ, և ձօսենալով Բանին կենաց և Հացին հրեշտակաց մտորին քով, այս լացող Մեծվայելուչ Մանկիկին եթէ հարցնելու ըլլայ թէ «Դու ո՞վ ես, ո՞վ Բեթղեհէմեան Մանուկ», անշուշտ պատասխան պիտի ընդունի թէ, Գնա՛ հարցուր Եսայի մարգարէին ու սորվէ (Թ. 6). Մանուկ մը ծնաւ մեզի, որդի մը տուեցաւ մեզի. որուն իշխանութիւնը եղաւ իր ուսերուն վրայ, եւ անուն կոչուեցաւ անոր՝ Մեծ Խորհրդոյն հրեշտակը, սփանչելի խորհրդակից, Աստուած, հօգ, իշխան, հանդերձեալ աշխարհին հայրը: — Գնա՛ հարցուր Դաւիթ Մարգարէին ու սորվէ՛ Սաղմունքն (Խէ. 2, 15). Մեր Աստուծոյ քաղքին մեջը մեծ է Տէր եւ յոյժ օրհնեալ, անոր սուրբ լեռան վրայ. սա՛ է Աստուած, մեր Աստուածը՝ յաւիտենա յաւիտենից, եւ սա պիտի հովուէ զմեզ մինչեւ յաւիտենա: — Հարցուր Դանիէլին (է. 10, 13, 15) և սորվէ թէ՛ «Հազարաւորներ ու բաւաւորներ կը պատէին ու կ'երկրպագէին անոր (որ կը բազմէր հրեղէն աթոռի վրայ). տեսան նստաւ ու գրեթէ բացուեցան. երկնից ամպերուն վրայ իբրեւ որդի մարդոյ

մէկը կու գար ու կը հասներ մինչեւ ցծերն ու մասուցուեցաւ անոր առջեւը. եւ անոր տուեցաւ իշխանութիւն ու պատիւ եւ բազաւորութիւն, ու ամէն ազգեր ու ազիւնք ու լեզուք անոր պիտի ծառայեն, ու անոր իշխանութիւնը՝ յաւիտեական իշխանութիւն է որ չ'անցնիր. ու անոր թագաւորութիւնը պիտի չաւրուի: Իմ մարմինս սոսկացաւ իմ անձիս մէջ» — Հարցո՛ւք Իմաստնոյն ու սորո՛վէ՛. «Տերն հաստատեց զիս իր գործերուն վրայ՝ սկիզբն իր ճամբաներուն. ի սկզբանէ ծնաւ զիս... երբոր երկինքը կը պատրաստէր, անոր հետ էի. երբոր հաստատուն հիմեր կը դնէր երկրի, ես անոր բովն էի. ե՛ս էի՝ որով Տեր միշտ կ'ուրախանար. ու կը ցնծայի անոր առջեւ ամէն ատեն. երբ զուարեացած էր Տիեզերքը ստեղծագործելով, եւ կ'ուրախանար յորդիս մարդկան» (Առաւ. Ը.): — Ես Բարձրեւորեալ Բերնէն ելայ. ես ի բարձունս բնակեցայ... ես երկնքի տրանակներուն մէջ պստեցայ, ու գնացի անդունդներու խորքերուն մէջ... ես իմ հանգիստ մարդիկներու մէջ փնտռեցի. ան եղաւ իմ ժողովրդիս, որուն մէջ բնակեցայ: Ամենուն Արարիչը պատուիրեց ինձ ու ըսաւ. Յակոբայ մէջ բնակե՛՛ դու, ու Խորայի մէջ ժողովրդիս բռնե՛... Սուրբ Բաղդաթի մէջ զիս հանգչեցուց, ու Երուսաղէմի մէջ եղաւ իմ իշխանութիւնս: Ու արմատացայ փառաւոր ժողովրդեան մէջ... Սօսեցե՛ք ինձի՝ դուք ամենեկնիդ որ ցանկացած էք ինձի ու կոտորե՛ք իմ պտուղներս: Որովհետեւ իմ յիշատակս մեղրեմ աւելի Բաղդաթ... Անոնք որ զիս կ'ուսեն, տակաւին պիտի աւոթեման. եւ որոնք որ զիս կը խմեն, տակաւին պիտի ծառային: Ով որ իմ խօսքիս մտիկ կ'ընէ, ամօքով պիտի չմնայ. եւ որոնք որ ինձի հետ կը գործեն չպիտի մեղանշեն... Ո՛չ առաջինը կրցաւ ճանչնալ զիս եւ ո՛չ վերջինը կրցաւ զննել. Բանգի իմ խորհուրդս ծովածաւալ է, եւ իմ գաղտնիքս անաւոր անդունդներու պէս... Տեսե՛ք քե ինձի համար չափաւորեցայ, այլ ան ամենուն համար որ զիս պիտի փնտռեն» (Սիրաք, ԻԴ. — Հմմ. Կառ. Թոր, Թ.):

6. «Ո՛վ հրաշք, ո՛վ սքանչելիք, ո՛վ

գաղտնածածուկ խորհուրդք, Եղբա՛ւք, բընութեան իրաւունք եւ օրէնք կը փոխուին մարդուս մէջ. Աստուած կը ծնանի, Կոյսը առանց առն կը յղանայ, միանգամայն կ'ըլլայ մայր եւ կոյս. մայր եղաւ բայց անպակաս: Ո՛վ հրաշքի եւ անխմանալի միաբանութիւն. ո՛վ նորափայտի եւ անուր խառնումն. Աստուած որ էն եւ էր, Արարիչն լինի արարած. որ անբովանդակելին է, կը պարփակի. որ կը փարթամացնէ, ինքը կ'աղքատանայ. անմարմինն կը զգենու մարմին. անտեսանելին կը տեսնուի. անշօշափելին կը շօշափուի. անըմբռնելին կ'ըմբռնուի. զոր կ'օրհնեն երկինք եւ երկիր, նեղ մտուրի մը մէջ կը զետեղուի» (Ս. Օգոստ.):

Գոչնէք ուրեմն, հաւատացեա՛լք, աղաղակէ՛ք անգաղար. «Ո՛վ անմահ, սուրբ ու կենարար երկնաւոր Հօր սրբաշնորհութեան փառքին զուարթ Լսյալ՝ Յիսուս Բրիտանոս. օրհնեա՛լ ըլլաւ յաւիտեանս: Օրհնեա՛լ ըլլաւ, ո՛վ Արդարութեան Արեւ որ երեւցար մեզի ի բարձանց. ո՛վ շնորհք Աստուծոյ. Փրկիչդ ամենայն մարդկան, որ ի Մարիամ Կուսէն ծնանելով, երեւցար մեզի երկու անասնոց միջեւ, մտուրի մէջ, խոտերու վրայ, մեր սրբազան կերակուրը, մաերիմը, քաղցր կենակիցը ըլլաւ, զմեզ բոլորովին ի քեզ փոխարկելու համար: Օրհնեա՛լ ըլլաւ ո՛վ աստուածային առաջնորդ մեր. ո՛վ սիրելի եղբայր մեր, որ «Աերդ սիրով խոնարհեցար, ի փրկութիւն մեր մարմնացար» (Շնորհալի):

7. Բանգի Նա սիրեց զմեզ անպատում ու յաւիտեական սիրով: Մարդայեալ Բանն Աստուած, Միածին Որդին Հօր, որուն ձեռքով ստեղծեց տիեզերքը, զոր ժառանգ ըրաւ ամէն բանի, որ անոր փառաց յոյսն է եւ անոր էութեան նկարագիրը, որ իր խօսքին զօրութեամբ ամէն բան կը պահէ ի պոյուութեան (Եբր. Ա.), Մարգարեալ Բանն Աստուած իր մտութէն, ուր երկնաւոր ճառագայթներ կ'արձակէ, իր մանկական ճիչերով կը զոչէ մեզ. «Աստուած ա՛յնպէս սիրեց զաշխարհ, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ». (Գով. Գ. 16). Յաւիտեական սիրով սիրեցի զեզ», (Եբրմ. Լա. 3). «Հուր

եկայ ձգել երկրիս վրայ. եւ ո՛րչափ կ'ուզեմ որ շուտով բորբոքի» (Ղուկ. ԺԲ. 49): «Ինչպէս որ սիրեց զիս իմ Հայրս, նոյնպէս ես ալ զձեզ սիրեցի... Ասկէ ա՛լ աւելի մեծ սէր չի կրնար ունենալ մէկը՝ եթէ իր անձը դնէ իր բարեկամներուն վրայ» (Յովհ. ԺԵ.) «Սիրեց զիս ու մասնեց զինքն ինձի համար» (Գաղ. Բ. 20): Սէր կ'աղաղակէ իր խանձարուրներէն չարժեքով իր աստուածային թաթիկները, մեզի ուղղելով իր երկնահասնգոյն բիբերը, շողացնելով իր մարդարտանքման արցունքները. Սէր՝ իւր գողտրիկ Սիրաը ցոյց տալով որ մեզի համար կը բաբախէ. Սէր կ'աղաղակէ իր մանարիկ լեզուով, Սէր՝ իր բոլոր մարմնով և հոգով, զոր գիտակցօրէն ողջակէզ ըլլաւ մեզի համար և ազատեց զմեզ սատանայի գերութենէն, մեր կըրքերուն սորկութենէն, զժոխոց տանջանքներէն, կոչելով ի շնորհս, ի խաղաղութիւն և յերկնաւոր անապական Հարսանիս Կառնն անարատի. միայն թէ մենք ուզենք. — Սէր կ'աղաղակէ, Սէր որ յայտնուեցաւ իր մարդեղութեամբ, անթիւ աշխատութեամբ, զրկումներով, անօթութեամբ ու ծարաւով, ցուրտի ու տաքի մէջ, անպատում չարչարանքներով, լիկումներով, մատնութեամբ, ապաակներով, ձաղկանքով, փուշերով, գամերով, խաչով, լիւրով ու դառնադառն մահուամբ. — Սէր՝ որ յայտնուեցաւ իր սուրբ Մայրը մեզի տալով, Ս. Եկեղեցին և անոր անսխալ Գլուխը, իր Փոխանորդը, մեզի սահմանելով հայր, առաջնորդ, Վարդապետ և դատաւոր. — Սէր՝ որ յայտնուեցաւ անիմանալի կերպով և երկինքն ու երկիրը յապուշ կրթելով, Ամենասուրբ Հաղորդութեան խորհրդոյն մէջ, որով ամէն անգամ կը ծնանի մեր խեղճ սրտերուն մէջ, անքակ միացնելով զմեզ իրեն. Ո՛հ, փոխանակենք այսքան ազնուական սէրը. մեր սրտերն ալ հալին ու մաշին սիրով. սիրով մեր գիրկն առնունք աստուածային Մանուկը, մեր սրտին մէջ թո՛ղ մինակ թագաւորէ. փարինք ու փաթթուինք իրեն, սուրբ համբոյրներ զրոշմենք իրեն եւ ատելով ու վարչելով մեղքէն, զղջանք ի խորոց սրտէ և արաստուօք լուա-

նանք անոր սուրբ ոտքերը. մահանանք միշտ անոր սիրոյն համար, պատրաստուելով սիրել զինքը յաւիտեանս:

8. Եւ կ'ուզէ որ մօտենանք իրեն աներկբայ աներկեւան վստահութեամբ. «Ասկից վերջը համարձակութեամբ մօտենանք անոր շնորհաց արօնոյն առջեւը, որպէս զի ողորմութիւն ընդունինք, ու շնորհ գտնենք» օգնականութեան յարմար ժամանակին» (Եբր. Դ. 16): Քանզի «Անհնարին է որ Աստուած սուս խօսի. որով հաստատուն միայնութիւն ունինք մենք՝ որ ապաստանեցանք ու գրեթէ մեր ձեռքով բռնեցինք հանդերձեալ յոյսը, զոր խարխալսի պէս հաստատուն ու անշարժ բռնեցինք մեր անձերուն համար» (Զ. 18, 19). և «Ասկեց վերջը, ո՛վ ելլեալ, համարձակութիւն ունինք Սրբութեանց մէջ մտնելու Յիսուսի արիւնովը... պի՛նդ բռնենք անշարժ յուսոյն խոստովանութիւնը, որովհետեւ հաւատարիմ է այն որ խոստացաւ» (Ժ. 19, 23): Եւ խոտացողն Աստուած «նր իր Ողբոյն չի խնայեց, այլ մեր ամենուն համար զանիկա մասնեց, ի՛նչպէս անով պիտի չշնորհէ մեզ ամէն բան» (Հռ. Է. 32): Աստուած իր սեպական, բնական, միաժին, մշտնջենաւորակից Ողբին առաւ մեզի, որ մեղաւոր էինք, որ թշնամի էինք, որ ապաշտորհ և հայհոյիչ էինք. տուաւ այն անմեղ և անարատ Կառնուկը, ամենաառատ մարդասիրութեամբ. տուաւ անմեղը՝ իբր յանցաւոր, անպարտը՝ իբր պարտաւոր, կենադրոժողը՝ իբր մահապարտ. մասնեց ամէն վիշակերու, ցաւերու, ճիգերու, աշխատութիւններու, աղքատութեան, արհամարհանաց, չարչարանաց, ամենազոհակ մահուան, զոր և նա ընդունեցաւ ամենատենչ փափաքով: Ուստի, եթէ մենք ուզենք, եթէ մենք պաղատինք ի՛նչպէս պիտի չտայ մեզի ամէն բան, ամէն նպատակ, ամէն առաքելութիւն, ամէն շնորհ, միթիւարութիւն, լուսաւորութիւն՝ մեր մնացած կեանքի մէջ, կատարեալ և Աստուծոյ հաճոյական ապաշխարութեամբ և բարի մահ, և ապա ուրեմն յաւիտեանական կեանք:

Ուրեմն՝ «Աստուծոյ համար պիտի տպրիմ,

եւ Քրիստոսի հետ ի խաչ պիտի ելլեմ, եւ կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես, այլ կենդանի է իմ մեզս Քրիստոս» (Գաղ. Բ. 19. 20):

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊՈԼԻՏԱՆ
(Շարունակելի)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

Տ Է Օ Ր Տ Ի Ի Ն Ճ Ի Ի Պ Ա Պ

Յիսուս Քրիստոսըն քեմիլ ազիզիյի, միւսապիլ վէ լեւեալ քեմիլիյի.

Յիսուս Քրիստոսըն իւզերինտէ, պազէն ինսանըն քէնտի քէնտիսիւրի պուտուղը տագիպար Կոզտըր, պազէն քիշինին քէնտի գուզվէթի ֆէզզինէ երեքտէլիպտէ քէնտինէ շէրէֆ կէթիրէն, ֆապաթ չօզ սիւրէմէյէն տագիպար տա Կօզ տըր: Օ հիշ պիր զահմէթ չէքմէքսիլին էն երեքտէք ֆազիլէթլէրէ վասըլ օլմազ, եւ՝ պիր ածիպ թապիրիլիքլէ վէ պիր զարիպ սատէլիքլէ օ տաիմա օ երեքտէքլիքտէ գալըր: Ածիպ թապիրիլիք տէմէքլիլիմին սէպէպլի, ծնուն սահիհ մահիյէթինի վէ զարապէթինի թէշքիլ էյլէմէսի իչուն տըր: Շիւպհէ իսթէմէզ քի Յուհաննէս Մկրտիչ տիւնհայր թէշքիլի էյլէմիշ օլսն պէօյիւք զէվաթտան պիրի տիր: Ինսան պուպէօյիւք թէվաթքիւրըն գարշըսընտա հայրէթտէ գալըր: Փապաթ ծնտա հիշ պիր զարապէթ Կօզ տըր, ծնտաքի թէճէսսիւմ էտէն սիմա, պիր լէյզամպէր սիմառ տըր: օ տա եզիպյա, եզիսէյէ պէնզէր, գուտսիյէթի ծնլարընքինին սէրէճէսինտէ տիր: Հալ պուքի Յիսուս Քրիստոս պիւսպիլիւթիւն ֆարզը տըր: Պուրատա ինսանըր դօրգուտան հայլան բօնթունտան, Կսպանի պալտան հիշ պիր էսէր Կօզ տըր: Հէր չէյ սատէ, տիւզ վէտտի տիր: Լաքին էյէր տիպէթ իտիլէճէք օլուրսա կէօրիւլէճէք տիր քի ֆազիլէթլէր պիրպիրիւնի թէֆէվիլիւզ էտիյօրլար: Իւք լահզէտէ

կէօզէ չարմայուպ տա, պիլախէրէ, Կալլաշմազա չալըշանլարը ածիզ պրազան պիր տէրին ալչապ կէօնիւլլիւլիւք, մէնֆաթընը արամամազ, թէվաթ, տիւնհայր իսթիհար, ինսանլարա մուհապէթ, Ալլահ իլէ պիրիլիք կիպի մէալի ծնուն իւզէրինտէ ասըլ զէմինի թէշքիլ էտէրլէր: Եունանիսթանըն կէթիշտիրտիյի պէօյիւք տէհալարըն իւզէրինտէ կէօրիւլէն սատէլիք, հիւանի զէվզ, ճէմալ չիլէյի, գանաաթքիւրըն կիպի կիւզէ հալլէրի կէօրիւլէն ինսան զանն իտէր քի հէման գալէմինի հազըրլատըրը կիպի թապիւտ, թանդիր էթմէք բէք գօլայ պիր չէյ տիր: հալ պուքի պու թապիրիլիք կէթիշմէք նէգատար միւշքիլ օլտուղընը պիլ ախէրէ հիւտէթլէ գալէմինի ետէրէ աթտըրը վազըթ անլար:

Ախլազի մանէվի թէքմիլիլին մէհէքթ թաշըսը ածը օլտուղը սէպէպլէ, Յիսուս ածտան տա պիկիանէ գալմատը: ծնուն իւզէրինտէ պիլ ճիւմէ ֆազիլէթլէրին թէճէլի էթմէսի իչուն, հեր նէվ ածըլար վէ էլէմէր տէ օնա հիւճիւմ էտէրլէր: Նե՛ մուքլու Ֆազիրիքէ, տէմիշտի օ: Իշթէ չըր չըրլապ իսաչա չըգարըլլօր: Լաքին ալլահանի սիմառըն նէշէսինի թազեիր էթմէք գապիլ օլմաջօր: Նե՛ մուքլու հազիմիքէ, պուլուրմուշտը: Իշթէ պիր տիրէյէ պաղլանըլլօր: վահշի սուրէթտէ գամշըլանըլլօր, երեզիւնէ թօգաթլար էնտիրիլիյօր: հապարէթլէրէ մարուզ գալըլլօր: Լաքին ազզընտան պիր չիքեայէթ իշթմէք գապիլ օլմաջօր: Նե՛ մուքլու մեհիւմէք իսհնիքէ, տէմիշտի: Իշթէ Յուհանըն քէնտինի էլէ վէրաիլի: Պետրոսըն ինքեար էթտիլի, ճէլլատլարըն ծնուն երեզիւնէ թիւքիւրաիւլիւ վազըթ, ծնըն հալընըզ պիր քէլամը, հալընըզ պիր պազըլը, հալընըզ պիր սուառը վար տըր, օ տա աֆըլըզ վէ մէրհամէթ քէլամը տըր: Նե՛ մուքլու աւալիք իչուն քիւսսի չիքիլիքէ, պուլուրմուշտը: Իշթէ քէնտի ֆիքրինի, գալպինի, հայաթընը: հէր չէյինի տիւնհայա վէրիպտէ, մուգապէլէթէն իսաչ էզիլէթինէ վէ լէզալէթինէ միւսթահապէ կէօրիւլմիւշ իքէն, եինէ տէ գալպի սատաթթ իլէ մալամալ տըր: Ա՛հ, չուպէմ-

(*) Տես թիւ 424, էջ 723:

տէ էյիլիք էտիպտէ մուգապիլինտէ միւքեա-
 ֆաթ պէքլէմէմէք նէ՝ գաւտար կիւզէլ տիր։
 Պիզ, պաշգաւարընըն խալըը իշուն քէնտի
 քէնտիլէրի ունութանլար վէ պա խուսուս
 էն զիյատէ սէվմիշ օլտուզլարը քիմսէլէր
 թարաֆընտան ունութուլանլար գարշըընտա
 պէրալը թազիմ, պաշ էյէրիզ, տիզ չէօքէ-
 րիզ։ Փագաթ սէվմիշ օլտուզլը քիմսէլէր թա-
 րաֆընտան թահպիր օլունմագ, բէնճիտէ
 կէօրմէք, հարըլմասը միւմքին օլան էն պէօ-
 յիւք էյիլիլի հարաբգտան, հայաթլարըն էն
 թէմիզի, էն ալիսի օլան հայաթընը ինսան-
 լար իշուն ֆէտա էտիպ տէ հիշ պիր միւ-
 քեաֆաթ կէօրմէմէք, նանքէօրլիւքտէն մատա
 պիշ շէյէ լալըզ օլմամագ, հարմըշ օլտուզլը
 էյիլիքլէրին չօզլուզը ալթընտա էզիլտիլի
 հալտէ, քէնտի քէնտիսինի պաթիթիար հիսս
 էթմէք։ իսայր, եէր հիւզիւնտէ պունտան
 տանա պէօյիւք պիր շէյ կէօրիւմէմիշ տիր։
 Պէն չիմտիլիք Յիսուս Բրիստոսըն ալլահըզը-
 նը բէրտէ արգասընտա սէթը էտիյօրըմ։ Շա-
 ւընըզ, ծնուն, էն խալիս պիր մէհապպէթ
 սայիգասըյա, էն պէօյիւք ֆէտագեարըզլար
 սայէսինտէ, իսաշ իւզէրինտէ էօլմէյի պիլէ
 իրթիքեապ էտէրէք ինսանլարը սէվիպ, ծն-
 ւարա էյիլիք իտիպ տէ, գարշըլըզ օլարապ
 էն պէօյիւք նանքէօրլիւք կէօրտիւլիւնէ պա-
 գար վէ ալապի կիւզէլլիլին, Փագլիլէթին
 էն հիւքսէք տէրէճէսի իշթէ պուրասը տըր
 տէմէքտէն քէնտիմի ալամամ։ Յիսուսըն
 էօլիւմիւնէ նիսպէթէն Սօգրաթըն էօլիւմիւ-
 նէ՝ տիր։ Պղատոնըն թէսալվուր էյլէտիլի
 զանմէթ չէքէն սալիւ վէ սուշսըզ իտէալը
 հագիգաթը հալտէ իզթիլիպալարա կիրիֆթար
 օլան սալիւ վէ պիսուշ Յիսուսըն ինտինտէ
 հիշ հիւքմիւնտէ տիր։ Իշթէ չիմտի Բուսօնըն
 սէօլլէրինին մահիյէթինի անլայօրըմ։ «էյէր
 Սօգրաթըն հայաթը վէ էօլիւմիւ պիր ազլըը
 առտէմ էօմիւ վէ էօլիւմիւ իտէ, Յիսուս Բը-
 րիստոսըն հայաթը վէ էօլիւմիւ պիր Ալլահ
 էօմիւ վէ էօլիւմիւ տիր»։

Պու գաւտար հիւքսէք, գալի, հայաթ վէ
 մէմաթտա սապիթ օլտուզլը գաւտար տա սա-
 տէ, թապիլի վէ թէքմիլ օլան պիր Փագլիլէթ
 գարշընտա հայրէթլէրէ զարգ օլմուշ օլա-

րապ պունըն սէպէպինի արատըլըմ վազըթ,
 պու նէհրին ճէրէհանընը թագիպ իթտիքտէն
 սոնրա, պէնի թէաճիւպտէ պրապան զահիրի
 առտէմի անլայապիլմէք իշուն թա սաթիլի
 առտէմէ գաւտար նուֆուզ էթմէք մագսառըյ-
 ւա, ծնուն մէնպարնա չըգմալա չալըտըլըմ
 վագըթ, օրատա նէ՝ պուլտուլըմը պիլլըմի-
 սինիզ։ Չանն էտէրալին քի ծընը բուհընըն
 թա տէրունինտէ, քէնտինի ապա թէրք
 իթմէնէն պիլմէմ նէ՝ կիպի պիր միւսաֆիր
 վար տըր։ Սնուն հագգընտա սէօլլէտիլի վա-
 ւըթ, պէնի ապա էալլընըզ պրագմագ հօ-
 ւունտա իտարէի քէլամտա պուլունըր։ Սնուն
 քէլամարընը տէրճ էթմէք իշուն ինսանլա-
 րըն սուս օլտուզլը վագըթ, օ տա պէրապէ-
 րինտէ պուլունտան միւսաֆիրինի տիյնէմէք
 իշուն սիքիւթ էտիյօր։ Պիր սրաաշ իլէ կէօ-
 րիւշիւր կիպի անընլա կէօրիւշիւր։ Դէն-
 տինտէն մատա հիշ պիր քիմսէլին կէօրմէ-
 տիլի հիւզիւնէ պազըյօր։ Պու առտէթա պիր
 պաշգասը իլէ տաթիլէն բէրվէրտէ էտիլէն
 պիր միւնասէպէթ, պիր իթիլաթ տըր,
 շէօլլէ քի պազլը քէրթէլէրտէ, հիւքսէք շէյ-
 լէր տիւշիւնէն պիր առտէմէ արա սըրա վագը
 օլտուզլը կիպի, ծնուն ազգընտան պիր թա-
 ւըմ քէլամլար քի հիշ ապա պիլիմ իշուն
 սէօլլէնիլմիշ օլմայուպ, օ իշէրիտէ քէնտի
 քէնտիսի իլէ գօնուշուրքէն ազգընտան գա-
 շան քէլամլար տըրլար։ Ղազարոսըն մէգա-
 րընտա տուա էթաիլի վագըթ։ «հէր վագըթ
 պէնիմ բիւնալը գապուլ հէր օյսուլընը պի-
 յիւ իսիմ» հօլունտա իտարէի քէլամտա պու-
 ւունըր։ Ղէթիւնիւր պալլէսինտէ տէ «պու
 քեապ պէնսէն ուզապաւսայր ! մամաֆիլի,
 պէնիմ իսքէսիլիմ սէյիլ, սէնիմ իսքէսիլին օլ-
 սուն» տէր։ Վէ իսաշըն իւզէրինտէ տաթի
 «պէնի նիշուն քէրէ քէրին» քէլամարընը
 թէլէֆթիւզ էյլէր։ Չանն իտէրիւն քի օ,
 հալը սիւքիւթտա քէնտիսինտէն հօգարտա
 օլմասըյա պէրապէր քէնտինէ միւսալի պու-
 ւունտան տիկէր պիր քէնտինէ սէճտէ իտէր։
 ծնտան սէվիլտիլի հալտէ ծնու տա սէվէր վէ
 ծնուն իլէ, պիզգաթ քէնտինին պուլուրտու-
 շը իւզրէ, պիր տիրէր։ վէ պիր հաեաթա
 մալիք տիրէր։ «Օնուն իլէ պէն պիրիլ»։

Հէմ պու տախիլի միւնասէպէթինի կիզ-
լէմէյօր : Առաքեալլարընըն քէնտիսինէ էն
սարղընընտան զիյատէ հազգընտա թէվէճ-
ճիւհքեար , քէնտիսինէ եազըն , կէօյլէրինին
զարշիսընտա օլան օ միւստահիպինի շայիրտ-
լէրինէ պիտիրմէք լազըմ կէլտիյինտէ , տօ-
լամպաճ եօլլար արամայօր , աչըպտան աչըղա
սէօյլէյօր . «Բէհեքիմ , պու իսմի վէրիւր օնու ,
պէնի սեվէր... բէհեքիմին պէնի քանըսըր
կիպի , պէն սէ բէհեքիմի քանըրմ . . սիգէ
սեօյլէսիյիմ քէլամլարը պէն քէնսիմսէն սեօյլէ-
մէյօրում , օնլարը բէհեքիմսէն եօյրէնմիւր...
պէնիմ նաճագամ բէհեքիմիմ իրասէթինի կաբ-
մագ սըր . . Բէհեքիմ վէ պէն պիւրիգ» , վէ
զիյրտէ կէօրէճէյիմիզ պուճա միւմասիլ պիւր
չօզ իֆատէլէրտէ պուլունուր :

Ֆազաթ քէնտի իլէ բէտէրի արասընտա
օլան պու միւնասէպէթ , Ալլահն օնտա պու
սաթին օլմասը նէ տիր աճէպա : Ալլահ իլէ
պիղիմ արամըլտա օլան միւնասէպէթ տէ-
յիլմի , թապիլի եիւքսէք տէրէճէտէ պիր միւ-
նասէպէթ իսէ տէ եինէ պիղիմթինէ պէնզէր
տէյիլ մի : Եօգսա պաշգա պիւր շէյ մի տիր :
Պուճը պիլէ քիմ տէյէճէք տիր , քէնտիստէն
պաշգա պուճը քիմ պիլէ պիլիւր : Պիզ իզ-
թիտարըմըզ տայիրէսինտէ զահրտէն պա-
թընա տօղըու եիւրիւրիւզ . չիւպհէ էտէրիւզ ,
չէօյլէ պիր ազ ֆարպընտա օլուրուզ . ֆա-
զաթ պիր նօզթալա վասըլ օլուրուզ քիպա-
սիրէթիմիզ պաղլանըր , արթըզ կէօրէմէիւզ :
Էյէր Ալլահ օրատա իսէ , քէնտի սէօյլէսին
պիլէ : Պիզ միհրապա գատար տախիլ օլ-
տուզ : Աչ ե'ա Բապպի օնըն գաբուսընը . վէ
սէն օրատա իսէն , պիլէ խապէ'ր վէր : Եա'
Յիսուս , սէն սատէճէ պիր ազիզմիսին , Ալ-
լահն տահա տէրին իլհազըլընտա պու-
լունան պիր սալի'ն մի , պիր աաէ'մ մի սին :
Պաշգա պիր շէյ վա'ր մը աըր : Ֆազլա պիր
չէյին վա'ր մը աըր . «Տէօյլէ' , սէօյլէ' , բէճա
էտէրիւզ . արթըզ վազթը աըր . սէնի տինլէ-
մէք իչուճ հազըրլանմըլ օլան եիւրէքլէրիմիզ
սէճատմըզն սիւքիւթը վէ մէհապպէթիմիլին
չիտտէթիլէ մուգապէլէ էտէճէքլէր :

(Մապաի վար)

Ն Ո Ւ Ս Պ

Ի ՊԱՏԻՒ ՍՐԱՌՅ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԵՄԱՅ

Ո'վ Մարիամ Ասուածամայր ,
Հրեշտակն երկնից ողջոյն ինչ օայր .
Լի շրնորհօք՝ Ողջոյն Սուրբ Կոյս ,
Քրիստոնէից հաստատուն յոյս :

Որհնեալ եւ դու ի յնաւ կանայս
Դուստր ընտելալ ի վախճան այս .
Մարգարէիս գուշակեցար
Դու Յանկայիդ եւ Կենաց ծառ :

Եհան Եւա ի մեկը զգարդ
Զանմեղութեան՝ զոր ունէր մարդ .
Այլ Յիսուսիս՝ օրեւայ մեզ Քեւ ,
Զանմահութեան առաջ զպարգեւ :

Դո՛ւ զաշխարհիս ըզկենարար ,
Յաւուրց վախճան փառօք ծընար .
ԶՏեղն որ զերկիւրս օայ մարդկան ,
Որ նեւս սիրով ի ապաստւ կան :

Քոյդ քարճութիւն ահլուր , աւճառ ,
Է՛ ի վերոյ քան զմեր հաւճառ .
Զի Միսիկն Ասուծոյ Հօր ,
Եւ քո՛ Որդի եղեւ յա՛յս օր :

Եոցոյդ արոյ պտուղն Է օրհնեալ՝
Յիսուս՝ որով պարօթիլ՝ մեզ կեալ .
Օրհնեալ աղբիւրն փրկութեան՝
Յիսուս , որով հոգիք յարեան :

Դո՛ւ զնա ծանեալ Ասուած եւ Տեղ ,
Դո՛ւ նեւս աւճառք երկիր պագեր .
Այլ ինքն Յիսուս Հոգւով ցրեծայ ,
Զ՝ Է քո՛ Որդի եւ մեր ընծայ :

Դո՛ւ Կոյսը եղիր միայն արժանի
Զքո կարն չարքի Մանկան-Բանի ,
Որ Արարիկն եւ պահապան
Է անեղծեղց իրացն որ կան :

Ընդ քո ճեպիլ յոյժ քարճական
Դասք հրեշտակաց հիացեալ կան .
Եւ խնայակից միմեանց լիկին ,
Զի նորանշան կալան Տիկին :

Արքայք երկրի Կուսիդ գան հռապ ,
Քեզ ընծայեալ զարքունի ցուպ .
Զանձինս՝ զաշխարհ եւ ըզհոգ օսն
Տիկնոց առնեն արդ ապաստան :

Դո՛ւ Ասուծոյ եւ օապանսի՝
Զոր շուրջ պատեն արոց քանակի .
Դո՛ւ յուսոյ առջ առաւօտեան ,
Ի մեկը զիսուս քարճ զկորսեան :

Դո՛ւ նման Յուդայ մեծագոր Կին
Զգլուխ փշրեցեր զարուսեկին ,
Կապեալ որպէս քաջ՝ զօրապար ,
Ըզքշմանոյն զսո՛ւ եւ զաւար :

Դո՛ւ երկնաւոր քամիքն եսքեր,
Աստուծոդդոյ կսաւ առնքեր,
Վասն մարդոյ յեայ քարեխօս.

Մ'ի խորս գորեղ քնաւ դարաւոս.

Տո՛ւր զմեղս ասե՛լ՝ զյարն ընթանի,
Որ ի կորուս զմարդն օանի.

Մա՛յր, ցարդ մեր յոյս չեյ ի դերեւ
Զի օգնեցիր մեզ արդարեւ:

Տո՛ւր արքուն կայ քարի գործով
Զի զմեզ անցցեմ արտաւազ ծով,
Զոյս սեր զհաւաս կայցով մեզ աստ
Յանգ յեայ մայրի Տիառն պատրաս:

Դո՛ւ Մարիամ սուրբ Յովսեփաւ
Մեզ զմիտուսի գուրն ա՛ն զարքաւ,
Եւ փարսեա՛լ՝ յիկեմ զիմ ա՛ն,
Միկն մօտ առ իս հասանեւ մահ:

Տիառն Յիսուսի եմ զիմք Արեան,
Զի ազգի մարդկան ի կեանս յարեան
Լեայք արժանի ի յաւիտեան՝
Երրորդութեան եւ իոյ ճեպեան

Հ. ԹԱՒ. ԹՈՌՆԵԱՆ

Թագ. Աք. Մ.

Վիեննա յօգոս. 1913

ՄԱՐԱԺԵՆ

Վերջերս քաղքիս մէջ վախճանեցաւ Յա-
կոբ Բէչէճեան, բարեյիշատակ Տէր Գաբրիէլ
քահանային երէց որդին, որուն 53ամեայ
կեանքին և հիանալի մտնական վրայ օգտա-
կար կը համարեմ մի քանի տող գրել:

Հանգուցիալը Մարաշու կաթողիկէու-
թեան անդրանիկ անդամներէն ըլլալով իրեն
փառք եւ երջանկութիւն կը համարէր ճշմա-
րիտ եկեղեցւոյ զաւակ ըլլալը. առանց մարդ-
կային նկատման՝ խօսքով ու գործով կը
պաշտպանէր միշտ ու կը յարգէր կրօնքի
վարդապետութիւններն ու պատուէրները:
Անդամ էր Ս. Կուսին ուրախութեան, Եօթն
Յաւոց, Յիսուսի Ս. Սրտին, Ս. Յովսէփի,
Ս. Յրանչիսկոս Աստիգացւոյն Երրորդ-Կար-
գին և Քաւարանի հոգւոց եղբայրութիւննե-
րուն. ասոնց ամէնուն պարտականութիւննե-
րը հաւատարմութեամբ կը կատարէր և պահ-
քերն և ծոմերն իսկ կը պահէր՝ հակառակ իր
սրտի ցաւին որմէ միշտ կը տառապէր: Ամե-
նէն ուշ 15 օրը անգամ մը Սուրբ Խորհուր-

դին կը մերձենար: Լուր օրերն իսկ մէկ կամ
երկու պատարագ կը տեսնէր: Ամէն իրիկուն
գործէն դառնալուն՝ ընտանեօք հանդերձ մօ-
տակայ եկեղեցին կ'այցելէր:

Իր այս բարեպաշտական սովորութեան
համեմատ մեռած օրն ալ մօրը և փոքրիկ
Յովսէփին հետ Ս. Հաղորդութեան այցելու-
թեան կ'երթայ: Տուն կը դառայ, կ'ընթրէ,
եւ քիչ մը խօսակցելէ յետոյ մօրը կ'ըսէ որ
այսօր ինքզինքս շատ տկար կը զգամ: Մայրը
որ տեղեակ էր արդէն որդւոյն վտանգաւոր
հիւանդութեան, իսկոյն բժիշկ կանչել կու-
տայ: Հիւանդը առանց այլալիւու հարցումներ
կ'ընէ բժիշկին եւ երբ կը հառկայ թէ յետին
ժամերը հասեր են, վերջին Ս. Խորհուրդները
կը խնդրէ, բայց միշտ խոհական հանդար-
տութեամբ: Քահանան կը հասնի և հիւան-
դին խոստովանանքը լսելէ յետոյ երբ կը
պատրաստուի երթալու սուրբ թոշակը բե-
րելու, հիւանդը կ'աղաչէ որ 1, 2 ժամ ետ-
քը բերէ. վասն զի. կ'ըսէ, վաղը ամսուն
առաջին ուրբաթն է. ութը ամիսէ ի վեր
առաջին ուրբաթները հաղորդուած եմ և վա-
ղը իններորդն ըլլալով, կը բաղձամ կէս գի-
շերը անցած հաղորդուիլ, ամսուն առաջին
ուրբաթի ներողութիւնը չահելու համար:
Ապա ժամացոյցը կ'ուզէ, կը լարէ, և կը սկսի
եռանդագին աղօթել. ներկաներուն ալ կ'ա-
ղաչէ որ իրեն համար աղօթեն որպէս զի կա-
րենայ պատշաճօրէն պատրաստուի Ս. Թոշա-
կին:

Յորդ իղձերով համակուած միջոցին՝ ժա-
մացոյցը 12 կը զարնէ, հիւանդը ուրախ սըր-
տով կը գոչէ. Ահա ժամանակը հասաւ, փու-
թացէ՛ք Աստուծոյ պաշտօնեան կանչելու,
վերջին օծման իւզն ևս միասին թող բերէ:
Հինգ վից վարկեանէն քահանան կու գայ
աննկարագրելի ջերմեռանդութեամբ կ'ընդունի
հիւանդը Ս. Թոշակը, և ապա Վերջին Օծումը
քահանային հետ փոխն ի փոխ աղօթելով:
Հոգեւոր խօսակցութենէ մը ետքը քահանան
կը մեկնի, հիւանդը կը սկսի քովինները,
յատկապէս մայրը մխիթարելու ջանալ: Սի-
րելի մայր իմ, կ'ըսէ, ներէ՛ ինձի, զքեզ ա-
մենափոքր կերպով իսկ վշտացուցած ըլլա-

լուս վրայ կը ցաւիմ : Ներում կը խնդրեմ ամէն անոնցմէ , որոնց նեղութիւն կամ վիշտ տուած եմ . ես ալ կը ներեմ անոնց որ ինծի անիրաւութիւն ըրեր են : Աղօթեցէ՛ք ինծի համար , վերջին ժամս կը մօտենայ :

Ամէնքը կը սկսին դառնապէս լալ : Բայց հիւանդը զուարթագին կը գոչէ . Սիրելիք , ինչո՞ւ կու լաք այս վայրկեանին , լացը թողուցէք մոլորեալներուն , անհաւատներուն որ յաւիտենական փրկութեան յոյսէն զուրկ են . ես կը մեռնիմ նախնեացս սուրբ հաւատքովը , կը մեռնիմ Աստուծոյ գթութեան ու ողորմութեան ապաւինելով . « Ի քեզ , Տէ՛ր , յուսացայ , մի ամաչեցից յաւիտեան » :

Ապա սաստիկ քրտնած ըլլալուն համար մօրմէն ճերմկեղէն կ'ուզէ , քովի սենեակը կ'երթայ , առանց մէկուն օգնութեան կը փոխուի , և կու գայ նորէն անկողին կը մտնէ ըսելով . Ահա պատանքս հագայ , մեռնելէս ետքը ձեզի ծանրութիւն պիտի չըլլամ :

Մօրը արտասուածոր աչքերը տեսնելով կ'ըսէ . Մայր սիրական , ինչո՞ւ կու լաս . դուն չէի՛ր ըսեր որ վերը երկինքը պիտի ժողվուինք . ահա ես կերթամ մեր ննջելոց և րանելի խումբին միանալու . եկո՛ւր , մայր իմ , ձեռքդ տուր որ համբուրեմ , եկո՛ւր տուր ինծի վերջին օրհնութիւնդ : Մայրը անհուն մորմոքով վերջին հրաժեշտի համբոյրը կը դրոշմէ հոգեվարին ճակտին :

Այս միջոցին Աստուծոյ պաշտօնեան նորէն կու գայ . հոգեվարը զայն տեսնելուն պէս նորէն արձակում կ'ուզէ : Նոյնհետայն չըրեշտակ Տեառնի զանգակը կը հնչէ , հոգեվարը մահճին մէջ ծուներ դնելով աղօթքը կ'ըսէ և աչքերը երկինք կ'ուղղէ սեւեռուն... Ո՛ւր կը նայիս որդեակ , կը հարցնէ մայրը . Գիշ մը ետքը երթալիք տեղս կը դիտեմ , կը պատասխանէ հոգեվարը . և վերջին անգամ աչքերը խոշոր մը կը բանայ , քաղցր ժպիտ մը գէմքին վրայ կը փայլի . հոգին կը թռչի իսկոյն երկինքը , գէմքին վրայ կը մնայ ժպիտը , խորհրդանիշ յաւիտենական երանութեան :

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

- Դեկտեմբեր 29 + Կիր. ամ. Դ. or Ծննդեան
29 Բշ. սկ. Ե. or Ծննդեան: Եւ Դիւանոր Առաք. Պետրոսի եւ Պօղոսի:
30 Դշ. քմ. Զ. or Ծննդեան: Եւ Որդոցն Առաքան Յակովբայ առաքելոյ եւ Յովն. Աւետիշին:
31 Դշ. քկ. Է. or Ծննդեան:
Յունուար 1 + Եշ. գմ. Ը. » » Տօն Տնօրէնութեան եւ նուաճաւորութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
2 Ուրբ. քկ. Պահոց:
3 Եր. քմ. Սրբոցն Աքրահամու եւ Խորենայ եւ անաբաթ բորեկացն Կողմայի եւ Դավիթնոսի եւ Ասուածատոյ վրկային: Եւ Ս. Բարսղի Կեսարու Հայրապետին եւ եղբոր նորա Ս. Գրիգորի Նիւսացւոյն. եւ Սեդեստասի Հռոմայ Հայրապետին եւ սրբոյ Եփրեմի : ուրին Աստուծոյ:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Եւր.)

Նոյն միջոցին հասան Թէոփիլեանց կողմէ երկու եպիսկոպոս , Իրոսկորոս և Պօղոս , և Ոսկերեանին մատուցին նամակ մը , որով կը հրաւիրուէր նա ժողովքին ներկայանալու և իրեն գէ՛մ եղած ամբաստանութիւններուն պատասխան տալու :

Ոսկերեանին քովը գտնուող եպիսկոպոսները նամակը բերողներուն պատասխանեցին . Գացէ՛ք Թէոփիլոս եպիսկոպոսին ըսէք , մի՛ խանդարեք , մի՛ հերձեք եկեղեցին , որուն համար Աստուած մարմնացաւ . յիշէ՛ Նիկիոյ կանոնները . եկո՛ւր այս թագաւորական քաղաքը որ նախ մենք քու գատղ տեսնեմք , որովհետեւ քու մասիդ եօթանասուն ծանր ծանր ամբաստանութիւններ կան :

Իսկ Ոսկերեան իրեններուն ըսաւ . Կուք ձեր դիտածը ըսէք , բայց ես նամակն պատասխանելու եմ , եւ նամակ մը գրեց ըսելով Թէ՛ « Փողովի կը ներկայանամ եթէ դուք հանէք իմ անձնական թըշնամիներս , որ են Թէոփիլոս , Ակակիոս , Անտիօքոս , եւ Սեւերիանոս , որոնք չեն կրնար ինծի դատաւոր ըլլալ... Արդ դիտեցած ըլլաք որ եթէ բիւր անգամ նորէն մարդ զրկէք ինծի՝ առկէ աւելի բան պիտի չը կրնաք լսել » : Եւ իրօք այս պատասխանը տուաւ եր .

րորդ և չորրորդ անգամ եկող պատգամաւորներուն ինչպէս նաեւ Եւդոքսիոյի եւ Սրկադէոսի կողմէն եկող նաւիրակին:

